


**ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ**  
**ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ**

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արարատի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



**Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշներն Արարատի մարզում, %**


Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արարատի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,5%-ով և կազմել է 90,7%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 0,2%-ով՝ կազմելով 94,5%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 1%-ով՝ կազմելով 97,1%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Արգավանդի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (65,7%), «Ոսկետափի ԲԱ» ՀՈԱԿ-ում (75%), «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ում (79,5%), «Այգեստանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում(81,1%), «Գ.Արարատի ԲԱ» ՀՈԱԿ-ում(81,8%),

«Այգավանի ԲԱ» ՀՈԱԿ-ում(82,8%), «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում(84%), «Մրգավանի ԲԱ» ՀՈԱԿ-ում(84,2%) (Աղյուսակ 2):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 1%-ով և կազմել 90,7%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,6%-ով և կազմել 94,5%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Արարատի մարզում՝ 79,2%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



**Գծապատկեր 2՝ 2019թ. Արարատի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի**